

Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի 2018 թ. դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի
(տևողությունը՝ 150 րոպե)

11 – 12 րդ դասարաններ

1. Նավթ արտահանող երկրների կազմակերպության (ՆԱԵԿ) մեջ մտնում է 11 պետություն:
Դրանցից են՝ Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Իրանը: Թվարկե՛լ մյուս 8 պետությունները..... 2 միավոր
2. Ընտրե՛լ նշված պետությունների ճիշտ շարքն ըստ բնակչության թվի աճման
հաջորդականության.....1 միավոր
 1. Ճապոնիա, Ֆրանսիա, Ուկրաինա, Ռուսաստան
 2. Իրան, Ինդոնեզիա, ԱՄՆ, Հնդկաստան
 3. Իտալիա, Գերմանիա, Ավստրալիա, Մեքսիկա
 4. Թուրքիա, Ռուսաստան, Կանադա, Վիետնամ:
3. Ո՞րն է բնության բաղադրիչների ճիշտ գուգորդությունը.....1 միավոր
 1. սավաննա – օշինդր, սաքսաուլ – խոտակեր կենդանի
 2. գիլեյ – ֆիկուս, արմավենի – կապիկ
 3. տափաստան – կեչի, բոխի – սողուն
 4. լայնատերև անտառ – մայրի, ինճափիճի – գիշատիչ
4. Ծառայությունների ոլորտն ընդգրկում է բազմաթիվ ճյուղեր: Թվարկե՛լ դրանցից 8-ը..... 2 միավոր
5. Թվարկե՛լ մեզոզոյան և կայնոզոյան դարաշրջանների ժամանակաշրջանները
(հնից նորը՝ հերթական հաջորդականությամբ).....1,5 միավոր
6. Մագնիսական հակումը լինում է մի քանի տիպի: Ինչպե՞ս են որոշում դրանք:
Գրե՛լ տիպերը և դրանց որոշման բանաձևերը.....1,5 միավոր
7. Որոշե՛լ Կանադայի վարելահողերի տեսակարար կշիռը երկրի ընդհանուր տարածքում, եթե բնակչության (30 մլն.) մեկ շնչի ապահովվածությունը վարելահողերով կազմում է 1,8 հա/մարդ..... 2 միավոր
8. Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լ. 35° 30', արլ. ե. 73°: Որոշել..... 2 միավոր
 1. Ժամային ո՞ր գոտում է գտնվում վայրը,
 2. Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22-ին, կեսօրին:
9. Ամուր, Ամազոն, Օր, Ենիսեյ գետերն իրենց վերին հոսանքներում ո՞ր գետերի
միախառնումից են ձևավորվում.....1 միավոր
10. Աշխարհի քաղաքական քարտեզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ,
որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
 1. Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի առաջին փուլի կարևոր
իրադարձություններից է Օսմանյան և Ռուսական կայսրությունների փլուզումը:
 2. Տարածքի մեծությունը քաղաքաաշխարհագրական գործոն է:
 3. Աշխարհի երկրների մեծ մասը պետական տարածքային կառուցվածքով դաշնային պետություններ են:
 4. Գաղութային անցյալն ազդել է Աֆրիկայի երկրների սահմանների գծագրության ձևավորման վրա:
 5. Սահմանադրական միապետություններում երկրի օրենսդիր և գործադիր իշխանությունների
գործունեությունն իրականացնում է ընտրովի միապետը:
 6. Աշխարհի պետությունների ճնշող մեծամասնությունը կառավարման ձևով հանրապետություններ են:

11. Ըստ կիրառության բնագավառների առանձնացվում են բույսերի տարբեր խմբեր:
Դրանցից նշե՛լ 4-ը.....1 միավոր
12. ՀՀ մակերևույթի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
1. Սևանա լիճն արևելքից եզրավորված է Գեղամա լեռնավահանով:
 2. Սյունիքի բարձրավանդակի ամենաբարձր գագաթը Մեծ Իշխանասարն է:
 3. Փամբակ գետի հովիտը եզրավորված է Բազումի և Փամբակի լեռնաշղթաներով:
 4. Արփայի գոգավորությունը ՀՀ Հարավային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների մարզում է:
 5. ՀՀ ամենաբարձր ծալքաբեկորավոր լեռնագագաթը Կապուտջուղն է:
 6. Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան ճյուղավորումներն են Մեղրու և Թեքսարի լեռնաշղթաները:
13. Թվարկե՛լ ջերմոցային հիմնական գագերից 4-ը.....1 միավոր
14. Աշխատանքի աշխարհագրական բաժանման գործոնները շատ են: Թվարկե՛լ դրանցից 4-ը.....1 միավոր

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թ. Գրիգորյան